# Ս. ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻՈՑ
## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

*Բաղդատութեամբ երկուց օրինակաց, որք հրատարակուած են ի շարս Սոփերաց. կարեւոր մեկնութիւններն ալ աւելցնելով։*

---

| Ա. Օրինակ. | Բ. Օրինակ. | Մեկնութիւն. |
| --- | --- | --- |
| (Նրևս 13). Ի ժամանակս բռնակալութեան Տաճկաց, զոր յետ մահուան Առաջնոյ Մահմէտի. յութսուն և ի հինգ ամի իւրեանց... | (Նրևս 62).—Եւ եղև ի ժամանակս Տաճկաց բռնակալութեան յութսուն և եօթն ամի ունելութեան իւրեանց, Աբդըլմելիք Որդի Մըրուանայ դաւաճանութեամբ առաքէ և այլն։ | Հիճրէթի 85 տարին սկսած է 704 յունվար 14-ին. իսկ Հայոց 152 տարին սկսած է 703 յունիս 4։ Այս թուականք պէտք են գործողութիւնները ճշտելու համար. Հիճրէթի 87-ը չկրնար ըլլալ վասն զի Աբդլմելիք այլ ևս չկայր, որ մեռաւ 86-ին։ |
| (Նր. 18).—Եւ լինէր այս չարութեան խորհուրդ ի վեշտասաներորդ ամի իշխանութեան Աբդըլմելիքայ, որպէս չարեօք կործանեաց զերկիրս Հայոց մինչև յօր մահուն իւրոյ, և չորիցս այս եղ ի գլուխ հրամանաւ նորա։ | | Աբդլմելիք 685—705 իշխեց 20 տարի. չար խորհուրդը կըսկսի իւր 16-դ տարին, այսինքն 700. և չորիցըս կրկնելով այս չար խորհուրդը եղ ի գլուխ, այսինքն ի լըրման չորրորդ տարւոյն, որ կըլինի իւր 20-րդ տարին և թուական 704։ |
| (Նր. 19) Յետ մահու նորա յառաջնումն ամի իշխա- | (Նր. 65). Եւ տարան զնոսա ի Նախճաւան քաղաք, և լի- | 704 Զատիկը մարտ 30 է, իսկ Հիճրէթի 85. րէպիւլէվվէլ 18- |

| | | |
|---|---|---|
| նութեան Վլթի որդւոյ նորա։ Որ էր թուականն Հայոց հարիւր յիսուն և երկու, յաւուրս տօնի զատկին, այս առեալ ածին զբազմութիւն գերւոյն ի քաղաքն Դուին եյն։ | նէր այս ի մեծի զատկի տօնին։ | և Հայոց 152. մարգաց 1. Այստեղ վերջին կատարածէն ետքը տարի մը միջոց տալու է զի 705 ի վերջ կըյաջորդէ Վըլիթ և յաւուրս նորա կըհասնի գերութիւնը յԱսորեստան։ |
| (Եր. 19).—Ջերմ աւուրս յարգելանս պահէին... և յաշնան հասեալ ժամանակ... տալ տանէին յԱսորեստանեաց երկիրն։ | (Եր. 65). Ցարգելանս բանտից արկանէին ի ջերմ յամարային ժամանակս... և զմնացեալսըն վարէին ի գերութիւն յաշնանային ժամանակս։ | Աշնան ճանպայ ելնելով Ասորիք հասնելնին պէտք է դնել մերձ ի սկիզբն Նոր տարւոյն 706 յունվար 1. իսկ Հայոց 154 արեգի 3։ |
| (Եր. 20).—Մանուկ մի ի Գողթն գաւառէ. Վահան անուն նորա... սակաւ ամենից իբրև չորից տարեաց։ | (Եր. 65) Մանուկ մի փոքրիկ իբրև ամաց չորից որում անուն էր Վահան. | Վահան դեռ 4 չըլըացուցած կըտեռնուի, հետևաբար ծնեալ ի 701. |
| (Եր. 20). — Ցետ փոխելոյ ժամանակին Աբդլմելիքայ, և Վլթի որդւոյ նորա և Սուլիմանի եղբօր նորա։ | (Եր. 66). Ցետ վախճանելոյ ամպարըշտին Աբդլմելիքի։ | Աբդլմելիք մեռաւ 86 չէվվալ 14. որ է 705 Հոկտ. 8.=յաջորդներն են<br>Վլիթ Ա. 705 է 715<br>Սուլիման 715 է 717<br>Օմար 717 է 720 |
| (Եր. 20).—իբրև նստաւ Օմառ ի զըլխաւորութիւն Տաճկաց օրկ ի սիրտ նորա... հրաման տայր ժողովել զգերեալսն և այլն։ | (Եր. 66).—Առեալ զիշխանութիւնն Վըլիթ դառնայր և դարձուցանէր զգերեալսն յիւրաքանչիւր տեղիս և այլն։ | Սուլեման ըստ Ղևոնդեայ (եր. 40) իշխած է 2 տարի և 8 ամիս. մեռաւ 99 սէֆէր 10. այսինքն 717 սեպտ. 22, հետևաբար Օմար ի վերջ 717-ի կընայ անցնիլ իշխանութեան և գերեդարձը կըլինի ի 718 սկիզբն և Հայոց 166։ Երկրորդ օրինակի Վլիթ անունը սխալ է։ |
| (Եր. 23) Նա հա- | (Եր. 69).—Եւ ե- | Վահան հրաման |

| | | |
|---|---|---|
| սանէր ի գաւառ իւր Գողթն։ | կեալ հասանէր ի բընիկ գաւառն իւր ի Գողթն։ | ստանալու դժուարութեան կըհանդիպի, ուրեմն անադան կուգայ գոնէ 718 վերջ կամ 719. սկիզբ. ըստ Հայոց 167։ |
| (Եր. 23). Վասն զի ստէպ լուր առնա հասանէր եթէ մեռաւ Օմառ։ | (Եր. 71). — Ընդ այն ժամանակս վախճանի Ամիրապետն որ արձակեաց զնա. | Օմար ըստ Ղեւոնդեայ իշխեց 2 տարի և 5 ամիս, և մեռաւ 101 ըէճէպ 25, որ է 720 փետրվար 10. ուրեմն նոյն տարին կըլսէ Վահան, այսինքն է Հայոց 169 սկիզբն։ |
| (Եր. 24). — Իւրեանց կամացն ի գըլուխ ելեալ արարին յազգականութենէ Սիւնեաց տան։ | (Եր. 71). — Բռնադատէին զնա... մինչև հաւանեցուցին կամաց իւրեանց։ | Եւ ոչ մի նշան թէ քանի տարի յետոյ ամուսնացաւ. և թէ որչափ մնաց ի Գողթըն. ամուսնացեալ կ'երևի մօտ 20 տարեկան. իսկ 720-ին 19 տարեկան էր։ |
| (Եր. 25). — Դէմ եդեալ գնայր յաշխարհն Յունաց... իբրև գառնայր ի Վայոց ձորոյ զիւր ծածուկն յայտնի առնէր աներոյն... ապա կանացիւքն... վաղվաղակի և հասանէր յաշխարհն Վրաց։ | (Եր. 71). — Խորհեցաւ գնալ յաշխարհն Յունաց .. հասեալ ի Վայոց ձոր, յոյժ թախանձեալ ի կնոջէն...։ Եւ յայնըմհետէ ոչ լինէր նմա հանգիստ։ | Յետադարձ հաշուով պէտք է գըտնել։ Արդ՝ հալածանաց հինգերորդ տարին նահատակուելէն կըհետևի թէ 732 յուլիս այսինքն, ճձա, Հռռի, հալածանքը սկսաւ։ 12 տարի դադարելէ յետոյ հարկաւ միջադէպ մը կամ գրգռութիւն մը կըյուզէ հալածանքը Վահանայ անձին դէմ։ |
| | (Եր. 73). — Նորին հրամանաւ յուզէին զնա։ | Օմարէ ետքը եկան Եզիտ 720 է 724 Հէշամ 724 է 743 Եզիտի օրօք կը վերադրէ հալածանքը, իսկ Հէշամէ երբ և |

| | | |
|---|---|---|
| (Նր. 26). — եւ զտարւոյ միոյ աւելի կամ պակաս անդ անցուցանել դարձեալ եկն եհաս ի Հայս ի յԱրագածոտն… օգնական հեծեալք ի բաց կային ի նմանէ։ (Նր. 27).—ի Թագաւորաբնակ քաղաքըն եկանէին…Քրիստոնէից վերակացուին մինչև ասել, երթիցէ գնասցէ ի բաց և այլն։ | | ինչու կը վախնայ յայտնի չէ։ Տարի մի ի Սիւնիս կամ ի Վիրս անցնելով 733 Օգոստոսին կամ ՃՁԲ Սահմի. Վահան կըդառնայ Հիւսիսային ապաստանէն, Վրաց կամ Սիւնեաց կամ ի սահմանս երկոցունց, և կուգայ յԱյրարատ։ 733-ին իշխանն է Աշոտ Բագրատունի և կաթողիկոսն Դաւիթ Արամոնացի. Վահան երկուքը զատ զատ կը տեսնէ։ |
| (Նր. 28). երթեալ հասանէր ի Վաղարշապատ քաղաք և դիպեալ կաթողիկոսին ասէ երթ գնա յանապատ ուրեք և այլն։ | (Նր. 73) երթայր հանդիպէր Հայրապետին ի Վաղարշապատ քաղաքի․․ և հրաման առնու երթալ յանապատ։ | 733—734 ձմեռը Յովհաննավանք կ'անցնէ, և վերջապէս վանք քաշուիլ կ'որոշուի կաթողիկոսին կարծեօք, որ է Դաւիթ և ոչ Եղիա։ |
| (Նր 28). Սոէպ հասանէր այր մի գրաստով… տար զիս յանապատ ուրեք… և ապա մօտ լինէին աւուրք մեծի պատկին. և որ մնացեալ ի կրօնաւորութեանն դադարէր ամիս վեց։ | (Նր. 73) երթայ ի մենաւորանոցս ուրեմըն ի Շիրակ գաւառ, և անցուցանէր իբրև ամիս վեց։ | Այն տարւոյ Զատիկը կ'իյնայ 734 Մարտ 28, որ է ՃՁԲ Մարգաց 6. ուրեմն 734 Մարտի սկիզբ կը քաշուի ի վանս Շիրակայ և հաւանականաբար Խնծկոնից վանքը։ |
| (Նր. 29). Իշխանակնոջ ուրումն մըտաւորի… ասէ երթիցէ գնասցէ. Եւ հասեալ յանապատ անյայտաւոր և սակաւամարդ տեղիս, անցուցանելով զտարին մինչև ի նոյն աշունն։ | (Նր. 74) Յայտ առնէին տիկնոջ գաւառին… ասէ երթիցէ ի բաց. գնաց յանապատ ուրեմն անյայտ. և անդ առաւել քան զառաջինն ճգնէր ամ մի։ | Յետ վեց ամսոյ, այսինքն 734 Հոկտ. սկիզբ. կամ ՃՁԳ. Քաղոց, Վահան կ'անցնի ի վանս Թեղենեաց ի Նիգ գաւառի ի սակաւամարդ տեղիս։ |

| | | |
|---|---|---|
| (Նր. 30) — Զմտաւ ածեալ երթեալ հասանէր անդ ուր իշխանն Տաճկաց էր. և յիւր հաւատոցն վերայ համարձակութիւն խնդրեալ. . (երես 32) եւ էին ոմանք որ արգելուին զնա. բայց և ոչ հեշտանայր... և հասեալ ժամ գնալոյ... Առաջնորդ Ուխտին Յովհաննէս անուն պատրաստէր նմա գրաստ և վերարկու... և ոմն ի մանկագունից եղբարց...երթալ զհետ: | (Նր. 73). եւ ցանկայր վկայութեան. յետ այսորիկ դէմ եդեալ գնալ ի դուռն արքունի զի ի նոցանէ մեռցի և կամ համարձակութիւն առցէ. և հրաւիրեալ ցանկայր ի ճգնաւորացն .. | Թեղեննաց վանքէն կըդառնայ 735 աշնան կամ մերձ ի ձմեռն. կ՚իջնէ Յովհաննավանք մօտ կեդրոնին, ակնկալութեամբ յաջողութեան, և 735—6 ձմեռը կ՚անցնէ անդէն ի Յովհաննավանք. ուստի կ՚որոշէ երթալ և պատրաստութիւն և ընկեր առնելով կըմեկնի: Վահան ակնկալութիւն ունի հաւատոյ համարձակութիւն ստանալ, և այս առաւելագոյն յուսով կը դիմէ Ամիրապետին որուն նախածանօթ կընար եղած լինել: |
| (Նր. 32). եւ զայն ամս չորս որ հանապազ նեղութեամբ շրջեալ եղև. | (Նր 77). որ ինչ միանգամ կրեաց հալածանս ամն չորս, և ի հինգերորդ ամի երթալն իւր: | Այսինքն 732—736 տարիները: 732 ամարան հալածանաց սկիզբ. և 736 վերջ ուղևորութեան սկիզբը: |
| (Նր. 33). եւ հասեալ ի տօն Սուրբ Խաչին... մտանէր ի տաճարն Աստուծոյ. եւ այր ոմն ի վանացն որ Մաքենոցն կոչեն, Սողոմոն անուն տայր գիր քաջալերութեան, եւ հանդերձ մի ի պատճառս Թոշակի: | (Նր. 76) եւ հասեալ ի վանսն Մաքենոցաց, ծանուցանէ Հօրն, որում անուն էր Սաղոմոն... հաղորդէր ի տօնի սուրբ խաչին. եւ ոմանց զլոյսն տեսեալ, յուղարկեցին զնա մեծաւ սիրով: | Խաչի տօն կըհանդիպի 736 Սեպտ. 16. որ՝ է ՃՁԵ Տրէ 24... Վահան գալով ի վանըս Մաքենեաց, դարձած է ի Սիւնիս, իբր յողջոյն հրաժեշտի իւրայնոց: |
| | (Նր. 76) եւ եկեալ ի վանս Սովի անուն Առաջնորդի Ուխտին Յովհաննէս, եւ սիրով ընկալաւ... եւ փոխանակ իւր ա- | Սովի վանքը անծանօթ է. վանահօր անունին նայելով թերևս նոյէն Յովհաննավանք հանդիպած է, որ գրեթէ |

| | | |
|---|---|---|
| | ուքէ զհետ նորա յեղբարցն... | իւր բնական տունն եղած էր։ |
| (Նր. 33). Գայր հասանէր ի գաւառն Բզնունեաց ի գիւղն Արճկէ, յանապատ տրում անուն Նրաշխաւոր, յոտին Մասեաց, որոյ առաջնորդ Արտաւազդ, որ իբրեւ զԱբրահամ սիրով ընկալաւ զնա աւուրս երիս, եւ պատրաստեաց զճանապարհի պէտսն։ | (Նր. 77). Ցուղարկեալ անտի եկին հասին ի սուրբ Նրաշխաւորսն ի վանսն Արծկէոյ ի Բզնունեաց գաւառին, և էր անուն ուխտի Առաջնորդին Արտաւազդ... եւ յուղարկեցին .. եւ զմի ոմն յեղբարցն սպասաւորել նմա։ | Վահան կըհասնի Սիփան լերան մօտ ի վանս Նրաշխաւորի ի 736 դեկտ. այսինքըն ՃՁԵ Մեհեկանի. Այստեղ ընկերը կըփոխուի, եւ հարաւակողմանց վարժ մարդ կըտրուի իրեն ուղեցոյց։ |
| (Նր 34). եւ բազում հեծելոց դարձեալ ի պատերազմէ ի հիւսիսային կողմանէ եւ զհետ հասանէին գունդք գունդք վիճելով ընդ նմա։ | | Ըստ Ղեւոնդի (եր. 113) պատերազմ կար ընդդէմ Հոնաց զօրավար Մրուան եւ Աշոտ Նիզակակից — եւ ժամանակն մերձ ի վախճան Հէշամայ։ Այդ պատերազմէն դարձողներուն կըհանդիպէր Վահան։ |
| (Նր. 34) եւ հասեալ ի մայրաքաղաքն Ուռհայ, երկրպագէր. | (Նր.78) Գայ հասանէ ի քաղաքն Ուռհայ, երկրպագանել. | Ի սկիզբն 737 տարւոյ իսկ Հայոց ՃՁԶ Արեգ ամիս, Վահանի Եդեսիա հասնիլը։ |
| (Նր.34) եւ անտի ի Կաշնիկաս եկեալ անցին ընդ գետն Եփրատ. | | Այս է Ռաքքա ի վերայ Եփրատայ, որ եւ քաղաք Ս. Սարգսի կը կոչուի. Ս. Սարգսի գերեզմանէն որ է ընկեր Ս. Բաքոսի։ |
| (Նր. 35) Գայր հասանէր ի քաղաքն Ռուծափ. որ էր բընակութիւն Շամ իշխանի։ | (Նր. 78). Մինչեւ եկեալ հասեալ ի տեղի կատարմանն. | Ռուզուֆա բնակութիւն էր Հէշամ ամիրապետին։ |
| (Նր. 35) Զպատանին... արձակէր ի տեղի իւր, եւ ինքն | (Նր. 78) եւ որք զհետ նորա էին առէր կալ ի բացեայ։ | Գոնէ ութ օր այդ բանակցութեանց դընելով կուննենամք թէ |

| | | |
|---|---|---|
| արտաքոյ քաղաքին դադարէր սակաւ աւուրս։ | | հասած է ի Ռուծափ ՃՁԵ Մարերի 10. կամ 737 Մարտի 1, եւ օրն Ուրբաթ. Դ. շաբաթու մեծ պահոց։ |
| (Եր. 36) Երթայր առ Դպրապետն. (Եր. 37) ապա երթեալ առ իշխան ումն որ զպետութիւն եւ յեւմտիցն ունէր.— (եր. 39) եւ յետ աղօթիցն երթայր առ Դահճապետն, որում անուն էր Քարշ որ Հեմացւոց իշխան էր.—եւ առեալ տանէր զնա առ բռնաւորն։ | (Եր. 78) եւ աղաչէր պատմել... Դըպրապետին եւ մեծամեծացն։ (Եր. 80) եւ յետ աղօթիցն երթայր առ Դահճապետն։ Եւ հրաման ածել առաջի։ | Ասոնք են բանակցութեանց մանրամասնութիւնք, և կ'երեւի թէ յիշուած պաշտօնատէրերն ալ իրեն մանկութեան ծանօթներն են, որոց միջնորդութեամբ կրցուսայ Ամիրապետէն լաւ ընդունելութիւն գըտնել։ |
| (Եր. 43). Հրամայեաց հանել արտաքս եւ արկանել ի բանտ։ | (Եր. 83) Հրամայեաց դնել ի բանտ։ | Բանտարկութիւնն կրնամք դնել ՃՁԵ Մարերի 18, կամ 737 Մարտի 9, որ էր Շաբաթ օր. Ե. աղուհց. եւ տօն մըտից ի վիրապն։ |
| (Եր. 43). եւ արձակեալ դեսպանս փութով առ Մրուան ի ժամանակին ի Միջագետս հանդիպեցաւ։ | (Եր. 83). Արձակէր յաշխարհն Հայոց որ զիշխանութիւն աշխարհին ունէր։ | Մրուան Հոնաց պատերազմէն գալով Միջագետաց մէջ է կամ թէ Ամիրապետին քովէն կըդառնայ երթալ ի Հայս (Ղեւոնդ 114) բայց միշտ ի Միջագետս է, եւ ութ օր կը բաւէ Սուրհանդակին երթալուն եւ գալուն, զի շատ հեռացած չէ Մրուան։ |
| (Եր. 43). եւ նորա կացեալ ի բանտին աւուրս ութ... Զայն աւուրսն ոչ դադարէր յղել զիւրեանց | (Եր. 84). Ոչ դադարէր հանապազ յղել ի բանտն յիւրեանց առասպելախօս իմաստնոց։ | Շաբաթ բանտարկուած լինելով կիրակիէ կիրակի կըլինի ութ օր ամբողջ. այսինքն մինչեւ ծաղ- |

| | | |
|---|---|---|
| Օրինաց վարդապետարն։ | | կազարդի կիրակին։ |
| (Եր. 44). Եւ հասեալ տօնին զոր Ողոգոմեան կոչեն առ ցբանտապետն։ | (Եր. 84) Եւ ի գալ Ողոգոմենին մեծի տօնին։ | Ողոգոմենին ծաղկազարդի կիրակին է, յորում տեղի կունենայ խօսակցութիւնն։ ՃՁԵ. Մարերի 26. կամ 737 Մարտ 17. |
| (Եր. 45). Եւ ի վաղիւ անդր եկին հասին ի հիւսիսային իշխանէն։ | (Եր. 85). Ապա վաղիւն եհաս հրովարտակն ի հիւսիսային իշխանէն։ | Մրուանէ դարձող սուրհանդակք հասին 'ի ՃՁԵ. Մարերի 27 737 Մարտ 18.— Աւագ Բշ. որ և կատարման օրն է։ |
| (Եր. 46) Եւ հրամայեաց ածել զերանելին | (Եր. 86) Ապա հրամայեաց ածել. | Միևնոյն օրն է։ |
| (Եր 47). Սղնողակէին զի անյապաղ փութով զրաւեսցի ի կենցաղոյս. | (Եր. 87) Հրամայեաց արագ լուծանել ի կենացս | Դարձեալ միևնոյն աւագ Բշ. օր։ |
| (Եր 50). կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Երանելին և մեծն Վահան, որ օր եօթնևտասներորդ էր Մարտի ամսոյ ի շաբաթու զատկի պահոցն երկուշաբաթի, յիններորդ ժամու և ի քսան և եօթն մարերի ամսոյ։ | (Եր. 89). Այսպէս կատարեցաւ սուրբ Վահան, որ օր քսան եւ եօթն էր մարգաց յերկուշաբաթի օր զատկին յիններորդ ժամու. (Ծան. Մարգաց փոխանակ մարերի —դարձեալ՝ պահոց բառը ինկեր է. եղեր է Զատկի Բշ.)։ | Մարերի 27—փոխուեր է Մարտ 27 կամ 28. որ կը յիշեցնէ մարտ 18 ուղղութիւնը փոխանակ մարտ 17 ի ինչպէս գրուած է և Մարերի 28-ին հաստատուն տոմարով համապատասխան է գտնուեր, արեգի 20։ Մինչ շարժական տոմարով պէտք էր հաշուել ամեն թուական։ Եօթը տարի եաքը, կընէ 744 աշնան, որովհետև ի դարձին կըհասնին յայտնութեան։ (Տես եր. 57). որ է 445 յունվար 6. ՃՂԳ արեգի 18. |
| (Եր. 51) Գործեցաւ այս յաւուրս Շամայ յամերուսն յայնկոյս Եփրատայ գետոյն ի Ռուծափ քաղաքի... իսկ յետ եօթն ամի կրօնաւորըն Արտաւազդ։ | | |

Օ.